

Այս առիթով «Голосъ» ա-
սում է. «Պուսաստանի ուսերիմ
թշնամին Աստորիան է, որի հետ
մի ժամանակ հաշիւներ կը տես-
նեմք: Պատերազմը Աստորիայի
հետ մեծ ժողովրդականութիւն
կունենայ Ռուսաստանի մէջ, և
ուսա ազգը չի լինի մեղաւոր պա-
տերազմի անդժութեան համար»:
Յանկարի կը լինէր, որ այս
սպառնալիքը միայն սպառնալիք
մնար և վերաւորված ինքնասիրու-
թիւնը նոր զոհեր չը պահանջէր:

Վ. Տ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԵԼԵԹԻՑ

10 յունիսի

Թեկեթ անուանված գիւղի սուրբ Գէորգի
եկեղեցին յայտնի է ամենահնչակված ուխտա-
տեղ է Թեֆլիսի չրեկայքում, որի տօնը մայիս
ամսին լինելով Համբարձման, օրին ուխտաւոր-
ների այցելութեանը թիւ չը կայ: Բայց այդ ամ-
բողջ տարին միշտ լինում են այդտեղ ուխտա-
ւորներ: Մէկ այսպիսի ուխտատեղի անունը յի-
շելով, մարդ կը կարծէ, թէ ինչ տեսարան, կամ
ինչ կարգ կը լինի այնտեղ, բայց կը տեսնես
ընդհակառակը. եկեղեցին հասարակ քարից չի-
նած, անշուք եկեղեցիներից մէկը. քահանայն
նրա տօնին պատարագ է մատուցանում պատու-
տած զգեստով, կոտրած վակասը վրին, ճաճարի
չորջը քաշ են արած ջարդված ջահեր, որոնց
կոտրած մասերը մոմ վառողի զլինին են թա-
փում, Նաբան ասած օրհնած ջրի ամանի վրա
կանաչած ժանդը սարսափեցնում է տեսողին:
Աս է եկեղեցու գրութիւնը: Սենեակները որ
տեղ պէտք է ուխտաւորը մնայ չափ վատ են:
Սենեակների պատերը մրտած, առաստաղը
նամանակէս: Սենեակներում գիշերել անկարելի
է, որովհետեւ տանիքից թափած հողը հանգստու-
թիւն չէ տալիս: Սովորութիւն կայ մեր վրաս-
տանի հայոց մէջ սուրբի դրանը մնալ մի քանի
օր: Յայտնի է, որ կարօտութիւն ունեն, բացի
սենեակից մէկ անկիւն լինի, ուր կարողանան
կերակուր պատրաստել կամ աւելորդ բան գնել,
Ստիպված են լինում ամեն բան իրար վրա թա-
փել և շատ վրդովվում է ուխտաւորների սիրտը
և սառում է իրանց եռանդը: Սենեակի մէջ լինի
զոհն անթու. կամ սեղան, ոչ. այլ մէկ անգին

և այսպէս խօսելով ան, ինչպէս ուրախ եմ որ
մի հայ եմ տեսնում, մենք եղբայրներ ենք. մենք
բաւարացիներս էլ հայոց ծագումիցն ենք»:

Այս ափսոս որ ես հարուստ մարդ չեմ ...
Ինչպէս ուրախ կը լինէի այժմ Եւրօպա գնալ,
ինչպէս հպարտութեամբ ամենքին կասէի՝ «գի-
տեք, ես հայ եմ ...»:

Առաջ միայն գիտականները մեր մասին տե-
ղեկութիւն ունէին, բայց ահա երկու տարի է որ
ամբողջ աշխարհը ծանօթացաւ հայերի հետ: Էլ
լրագիր չը մնաց, քաղաքական չըջան չը մնաց,
որտեղ չը խօսէին հայերի մասին ...

Մէկ պակասութիւն ունեն հայերը, որից պէտք
է բժշկվեն, եթէ ուզում են որ ամեն օրինաւոր
հայը չամաչի հայ կոչվել՝ դա սարսափելի նա-
խանք է անմիաբանութիւնն է ... Թիւրքիայի
հայերը, ստում են, այժմ միաբանութեամբ են
գործում, բայց նոյնը չէ կարելի ասել անգլի-
կոմիտեան հայերի, մանաւանդ համալսարա-
նական, ինտելեկտուալ կազմող հայերի մասին:
Խորաբանիւրը նրանցից աշխատում է վայր
գցել, ոչնչացնել միտին, եթէ սա մի փոքր ի չա-
տէ օրինաւոր բան արաւ: Հայը պատրաստ է
իր նիւթական շահերին, իր անձնական կրքերին
բաւականութիւն տալու համար հերքել իր նմանի
ամեն արժանաւորութիւնները և յիշի հետ հա-
ւասարացնել նրան:

Թախտ է լինում նահապետական ձեռք չինած և
ամուր դրած իր տեղը, ով է իմանում թէ ինչեր
կը լինեն այն թախտի տակը: Ինչպե՞ղ զանգակա-
տունն է, նրա տակի սենեակը իր թէ ամենա-
լաւն է համարվում, որովհետեւ բաղիւն ունի և
առանձնացած է, բայց նրա մամուռած պատերի
հոտից կարելի է ինզղվել: Այժմ տեսէք այս
սրբութեան տեղի չըջակայքի սարսափելի ան-
մաքրութիւնը և այդքան բազմութիւնը սաղմոյի
զօռաբութեամբ է տանում հոտը թէ տօնին և
թէ իր օրերին: Մէկ տեղ, ուր արտաքինից ա-
նուն չը լինի, բացի երկուսից այն էլ ամենաան-
յարմար տեղերում, (եկեղեցու հանդէպ) այն-
տեղ էլ ինչ մաքրութիւն պէտք է լինի: Սպան-
դանոցն էլ շատ մօտ է եկեղեցուց, որտեղ
ամբողջ հաւաքվում է զուարճութիւններ անելու
զուրկայով կամ դալիսայով: մէկ խօսքով քա-
մանալի անհոգութիւն է տիրում: Այսպիսի ան-
կարգութեանց յետոյ յայտնի բան է աւելորդ է
խօսել գիւղացի երեխաների տղիտութեան վրա:
Ես միայն յիշում եմ հայր Աղափրեանցի եղած
ժամանակը, երբ ամեն բան կարգին էր: Ասում
են, որ տարուց տարի ժողովրդի եռանդը պակա-
սում է դէպի եկեղեցին և նուիրատուութիւնները,
նմանապէս, յայտնի բան է այդպիսի գրութիւնից
յետոյ Թիֆլիսի հարուստ հասարակութիւնը զը-
ժուարթութեամբ կերթայ միշտ ուխտ, Զարմանալի
չէ թէ օրից օր նուազի նուիրատուութեան աղ-
բիւր: մի և նոյն ժամանակ մեր պատուելի հո-
գաբարձուները պատկանում են բարձր ուսում
առած դասին, բոլոր յոյսը իմ կարծիքով, դրանց
վրա է: Կարծում եմ որ սուրբ Գէորգի տօնի մէկ
օրվայ եկամուտը որ ծախսվի՝ նրա պակա-
սութիւնները բոլորը կողմովն: Նա կը լինէր,
եթէ սենեակները փոքր ի շատէ ուղղին և ամեն
սենեակում մէկ հասարակ փայտից սեղան լինէր
և մի քանի աթոռներ և այն անգին թախտի
տեղ երկու մանր թախտեր լինէին: Ընէին նոյն-
պէս սամօվար, մի քանի բաժակ թէյի համար,
չայիի այն պոյնտով, որ կոտորող վճարի: Այդ
բաների վրա պէտք է վերականգն կարգել մի չա-
փահասակ կին, որովհետեւ այդպիսի բաներում կա-
նանց համբարութիւնը շատ է: Սենեակների ետեւի
քանդակած խրճիթները ծածկել ու մէկ վառելու
տեղ չինել բոխարու նման, որ կարելի լինէր
կերակուր պատրաստել այնտեղ: Այսպիսի յար-
մարութիւն գոյած ժամանակ շատ հեշտութեամբ
կերթան միշտ ուխտաւորութիւն: Այսպիսի հան-
գամանքներում պէտք է զիմել հոգեւոր իշխանու-
թեանը, որը արդէն լաւ հասկանում է ժամա-
նակի դրութիւնը:

Հայ կին

ՆԱՄԱԿ ԶԱՔԱԹԱԼԻՑ

23 յունիսի

Չաքաթալի գաւառի լէզզիների գիւղերում,
այս տարի հայերի սպանելը աւելի հեշտացել է

Ինչքան էլ խօսեմ, ինչքան էլ քաջը երազներ
անեմ, — արտասահման գնալ չեմ կարող: Միջոց-
ներս չեն ներում ինձ այդ չապալութիւնը ... Պէտք
է բաւականա՞նամ Թիֆլիսում ...

Իսկ ինչ կայ Թիֆլիսում, որից կարողանամ
իմ ֆելիտօնի համար նիւթ քաղել ...

Ինչ է կատարվել մեզ մօտ իմ վերջին ֆե-
լիտօնից յետոյ:

Թիֆլիսի փողոցներում շարունակվում էին գո-
ղութիւններ և աւաղակութիւններ, հայ երիտա-
սարգութիւնը տուեց բարեգործական նպատակով
սիրողների մի ներկայացում՝ խաղացին Շիլլէրի
«Աւագակներ» պիէսան, ցիրկը շարունակում է
իր միակերպ ներկայացումները, ուստից թառ-
օնը տալիս է միշտ գրեթէ մի և նոյն պիէսա-
ները, Աղբրակ Մանդրեկեանց հրաժարական է
տալիս Ներսիսեան դպրոցի տնօրէնից, «ՕՐ-
ՅՈՐԾ» շարունակում է հայոցի Գրիգոր Արծրու-
նուն, պ. Տէր-Յովհաննեսեանցի «Մանկավար-
ժական թերթը» միշտ խոստանում է երեւալ և չէ
երեւում: Բանկերը շարունակում են փողերը առ-
կոտով տալ: Քաղաքային վարչութիւնը շարու-
նակում է չը ջրել և ակնելի փողոցները, հասա-
րակութեան և աղբը շարունակում է յաճա-
խել: «Արտօկ» անուանված կուրը և պլաններ
կազմել նոր կուրսեր հիմնելու համար, ամենքը
շարունակում են ուսուլ, խմել, հագնվել, քնել,
խօսել, որքան կարելի է խիչ գործ կատարել,
չափել և խնայել, պակսել և երեսներ ունե-

և շատացել: Մօտիկ օրերս Բելէքեան գիւղում
պատահեցաւ մի եղեռնագործութիւն: Բելէքեան
գիւղը գտնվում է Զաքաթալի հիւսիսային կողմը
22 վերստ հեռավորութեամբ: մի հարուստ մեծ
գիւղ է, միջին բնակիչները թուով կը լինեն մինչև
2000 տուն: Այն գիւղում բնակվում են մինչև
20 հայ վաճառականներ միմիանցից շատ հեռու
ամեն միւր մի տաճիկ ղօնադի տանը: Դրանք
մեծ մասամբ ազուրեցիկ են: Գիւղի մէջ տեղը
չինած է եւրօպական ձեռով մի տուն, որին ա-
սում են Նայրըդ, այդտեղ է կենում Նայրըդ դա-
տաւորը: Նայրը գիւղի մէջ բնակվում էր ա-
զուրեցի վաճառական Գրիգոր Կ. Բալդուրեանց
33 տարեկան, նոր ամուսնացած և նրա մօտ
կար մի քաջ երիտասարդ 25 տարեկան Մար-
տիրոս անունով: Նա վարձել էր իր ծանօթ
տաճիկի մի փոքրիկ տուն, որի մէջ տեղաւորաց-
րած է եղել իր վաճառելու ապրանքը: Սրա
կից տան մէջ բնակվում է տանտէրը: Ամսին
18-ին, երեկոյան 9 ժամին, Գրիգորը իր խանու-
թի մէջ նստած, վառած մօմը առաջին դրած
կաշվէ մատենը ձեռին տեսնում է եղել իր
հայրը: Մարտիրոսն էլ պղնձը կրակի վրա
դրած պարսաստում է եղել ընթերցի համար
կերակուրը: Յանկարծ ներս են մտել երկու չա-
րագործ լէզզիք, մտնելուն պէս ամեն միւր յար-
ձակվել են հայրի վրա դատարկելով մի մի հրա-
ցան: Գրիգորը մօրթած հաւի պէս գետնին
թաւալում է, իսկ Մարտիրոսը դուրս է թռչում
օգնութիւն կանչելու: Անխիղճ աւագակները բա-
ւական չը մնալով գնդակների հարուածից սըկ-
սում են դաշնակով կտրուկ Գրիգորին: Աղբ-
միլին մինչև 18 դաշտի վերջ ստանալուց յետոյ
աւանդում է հողին: Աւագակները նրան այնպէս
թողում են և դուրս գալի Մարտիրոսի ետեւից:
Նրան էլ երկու կողմից դաշտից սաստիկ հա-
րուածներով փութում են գետնի վրա կարծելով թէ
նա էլ մեռաւ: Զարագործները իրանց բաւակա-
նացուցիչ աւարը ստանում և անհետանում
են, Տանուտէրը մտածում է որ այս սարսա-
փելի եղեռնագործութիւնը իրան վտանգի մէջ
պէտք է գցի, ինքն արդարանալու համար գնում
է և նայիլին յայտնում է: Նայիլը երբ լսում է իր
հայ թարգմանչի հետ գնում է կտրածների մօտ
և տեսնում է: Մարտիրոսը գիւղ կենդանի է:
Նա խօսում է պարզ և պատում է բոլոր եղե-
լութիւնը և յայտնում է շարագործների կեր-
պարանքը, կամ ինչպիսի մարդիկ լինելը: մի
քանի ժամ ապրում է և յետոյ հողին աւան-
դում: Ամսին 20-ին թուրքա հայ երիտասարդ-
ների մարմինները եկեղեցական կարգով ամփո-
փվեցան: Զաքաթալի հայոց գերեզմանատանը:
Արդէն իշխանութեան կողմից սկսված է քրե-
նութիւն:

Տեսնենք թէ այս եղելութեան մասին մեր
գաւառագետը ինչ կարգադրութիւն կտա:

Զ. Բ. Ա.

Նայ, — ահա մեր հասարակական հարուստ կեան-
քը ...

Յուսահատական է այնպիսի կեանքը: Ախ,
ինչի հա բանաստեղծ չեմ ...

Ես կը վեր առնեի թուղթ և գրիչ և ջերմ ար-
տասունքներ թափելով ամենախոր սիրոյ զգաց-
մունքից խնդրված գէպի մարդկութիւնը, որին
բոլոր արտից առում եմ, գէպի իմ հայ ազգը,
որին մի և նոյն ժամանակ պաշտելով սիրում
եմ և խոր կերպով արհամարհում եմ, կը գրէի
մի բանաստեղծութիւն ...

Այս ընթերցող, դու չես հասկանում այն վեճի
մի և նոյն ժամանակ զօրնային և դրախտային
զգացմունքը՝ սիրի և ատել մի և նոյն ժա-
մանակ ...

Սիրելի գաղափար, սիրելի ապագայ, — բայց ա-
տել իրականութիւն, ատել ներկան ... Ուզե՞նալ
որ քո սիրած, քո պաշտած աւարկան աւելի
լաւ, աւելի բարոյական, աւելի բարձր լինէր, —
աշխատել, ատելով և սիրելով նրան, որ նա
դառնայ այն, ինչ որ կամենում ևս որ դառնար,
այն ինչ որ դու նրա համար երազում ես ...

Բայց, աւանդ, ես բանաստեղծ չեմ:

Արի, դու իմ բարեկամ, Գաւառ-Քաթալի պա,
դու օգնիր ինձ քո գրելով յայտնելու այն զգաց-
մունքը, որ ես ինչպէս անդօր եմ յայտնելու ...

Դու նուիրեցիր ինձ քո գեղեցիկ բանաստեղ
ծութիւններից միւրը, — ահա սույում եմ ես նրան
իմ թոյլ ֆելիտօնիս մէջ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԹԵՏԱՍԱԿԱՆԻՐ

«Голосъ» լրագրի Բերլինի սեփական
Թղթակիցը գրում է յունիսի 29-ին հետե-
ւեալը. «Պաշտօնաւորը շատ ողորմած կեր-
պով ընդունեց հայոց պատգամաւորութիւնը,
որը ճաշելով նրա մօտ Պատգամում, երէկ
հաջորդեց լիազօր հաւատարմատարներին կօն-
գրեալում, որոնք բոլորը շատ սիրով ընդունեցին
նրան, հետեւեալ գործադրական կանոնադրու-
թեան նախագիծը թիւրքաց Հայաստանի հա-
մար:

1. Թիւրքաց Հայաստանի մէջ մտնում են
Էրզրումի և Վանի վիլայէտները, Գիարեքիլի
Վիլայէտի հիւսիսային մասը, այսինքն Կար-
պուտեան Սանճակի (որի սահմանը արեւմտեան
կողմից Տաւայում է Նիքիտո գետը), Արգա-
նեան Սանճակը և Սերաբեան Սանճակի հիւ-
սիսային մասը, որոնք կազմում են մեծ Հա-
յաստանի թիւրքական մասը, նոյնպէս և Բիլե-
նաւահանդիսը Բաթումի և Տրապիզոնի մէջ
առեւտուրը և ապրանք դուրս տանելը թե-
թեանցները համար Հայաստանը կը կոռա-
վարէ հայ զենկաւորներին տարող, որին կը
նշանակէ Բ. Դուրը երաշխաւոր պետութիւն-
ների համաձայնութեամբ: Նրա աթոռանիստ
տեղը Էրզրումը կը լինի: Կենդանագործեր-
նաւորը կատարող իշխանութեան բոլոր ի-
րաւունքները կը վայելէ, կը հետեւի կարգա-
պահութեան և հասարակաց ապահովու-
թեանը գաւառի ամբողջ տարածութեան վրա,
նրա պարտաւորութիւնը կը լինի հարկերի
ժողովը և իր պատասխանատուութեան տակ
պաշտօնական անձանց նշանակելը: Նա կը նը-
շանակէ դատաւորներին, նա կը հրաւիրի ընդ-
հանուր ժողովը, կը նախագահէ նրան և կը
հետեւի գաւառի բոլոր կառավարչական կազ-
մութեանը: — Զինք տարի ժամանակով ունե-
նալով իշխանութիւն զենկաւորներնաւորը
կարող է փոխվել Բ. Դրան ցանկութեամբ միայն
երաշխաւոր պետութիւնների համաձայնու-
թեամբ: Կը հիմնվի ինտրօնական կառավար-
չական խորհուրդ զենկաւորներնաւորի նա-
խագահութեամբ և այս խորհուրդի անդամներ
կը լինեն՝ 1) Ֆինանսական կառավարութեան
զլխաւորը. 2) հասարակաց շինութիւն-
ների գլխաւորը. 3) օրէնսդէտ. 4) սեկա-
կան զօրքերի գլխաւորը. 5) քրիստոնէական
ուսումնարանների տեսուչը. և 6) մահմետա-
կան ուսումնարանների տեսուչը: Վերջինիս

ԱՅՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Ի տես քու կուգամ, իմ թշուառ զու հայ,
Աչքով տեսնել քու քանդած տըները,
Ականջով լսելու զանգատ քու ու վայ,
Շօշափել մատով քու խոր խոցերը:

Հեռուէն մենք քեզ շատ կարեկցեցինք,
(Չոր կարեկցութիւն փող չի պահանջում)
Մարդոց առջին էլ երեքեմ լացինք,
Որպէս թէ հային մենք շատ ենք սիրում ...

Թէ մօտ լինէին — այնպէս չէ, հայեր,
Մեր բարտիկ եղբայրք պիտ պաշտպանէինք,
Մեզ բաժնում էին սարեր ու ձորեր,
Ասէք, օգնութեան ինչպէս հասնէինք:

Ունայն բարբաջներ ու պատիր խօսքեր,
Կընկալ արտասուք, զգացմունք բարկի ...
Աւանդ, անհոգի ու անսիրտ հայեր,
Լով խօսքով մի աղք չի կանգնիլ ոտքի:
Վըհառիք մըտքեր ... Բայց ես ինչ անեմ,
Չունիմ ես ոսկի, որ եղբայրքս տամ
Ուժ էլ չունիմ ես — նոցա պաշտպանել ...
Է՛հ, կերթում հետեւն գէթ արտմում ու լամ:

Գաւառ-Քաթալիպա

Ուղիղ չեմ ասել, ընթերցող, որ կարելի է սի-
րել և ատել մի և նոյն ժամանակ ...

Ասիացի

կը նշանակէ գեներալ զօրքերնաօրը շէ-
րիատի դատաւարական տեսչութեան գը-
լաւորի առաջարկութեամբ գաւառում: Գա-
ւառը կը բաժանվի սահմաններէ և զը-
րանք ևս կրկին կը բաժանվին—կազմէր ին-
Սանճախներն նահանգապետները և կազմէր
փոխահապետները, գեներալ զօրքերնա-
օրի նշանակած գործակատարներն են և ա-
մեն բանով նրա ներկայացուցիչներն են
հանդիսանում գաւառական գործերում: Կա-
ռավարութեան մէջ նրանց օգնում են եր-
կու խորհրդականներ, որոնց նշանակում է,
գեներալ-զօրքերնաօրը:

II. Որովհետև նահանգի գեներալ-զօրքեր-
նաօրի պարտաւորութիւնն է կարգը և հա-
սարակաց ապահովութիւնը պաշտպանելը
ուրեմն երկրի ընդհանուր եկամուտներէ
20% գումարը, իւրաքանչիւր տարի կը
մոցնվի կայսերական Ֆինանսական մինիստ-
րութեան մէջ: Արկրի մնացած եկամուտ-
ներէջ հանելով քաղաքային և դատաստա-
նական կառավարութիւններէ վրա լինելու
ծախսերը և ժանդարմի գումարի և միլիցիայի
պահպանելու ծախսը աւելորդը կը գործածվի
հետեւեալ կերպով. 1) 8% հաղորդակցու-
թեան ծանապարհների շինութեան և պահ-
պանութեան և ուրիշ ընդհանրագումար աշ-
խատութիւնների համար. 2) 20% ուսում-
նարաններ հիմնելու և պահպանելու հա-
մար: Ի բաց առնելով բարձր կարգի զը-
րոցների պահպանութեան համար եղած գու-
մարները, մնացորդը կը բաժանվի որպէս
օժանդակութիւն մահմետական և քրիստո-
նէական ուսումնարաններին, համեմատ իւ-
րաքանչիւր կրօնին պատկանող նստակեաց
ազգաբնակչութեան:

III. Մահմետական ատենանի գլխաւորը
ընտրվում է սուլթանից, և նրա տեսչու-
թեան է յանձնվում վերահսկողութիւն ու-
նենալ նահանգի մէջ գտնված շէրիատին պատ-
կանող բոլոր դատարանների վրա: Շէրիատին
պատկանող դատարանները միայն մահմե-
տականներին կռնները կարող են քննել
Քրիստոնեաներին և մահմետականներին մէջ
ծագած բոլոր թէ քաղաքային, թէ քրէական
և թէ առեւտրական վէճերը կը քննվին սովո-
րական դատարաններում: Այս դատարանները
կը կազմվին իւրաքանչիւր երեք դատաւոր-
ներից, որոնցից մէկը նախագահի պաշտօն կը
կատարէ: Դատաւորներին նշանակում է գե-
ներալ-զօրքերնաօրը և ներկայացնում է այս
դատարանների նախագահներին ի հաստա-
տութիւն: Հաշտարար դատարանը կը գտնվի
փոխահապետի, կազմի և նրա խորհր-
դականների ձեռքը: Առանձին կանոնադրու-
թիւնները կորոշեն շէրիատի դատարանների,
սովորական դատարանների և հաշտարար
դատարանների թիւը, իշխանութեան սահ-
մանը և նրանց տեսչութեան տակ գտնված
առարկաները: Քաղաքային և քրէական օրի-
նադրերը կը կազմվին Ներքապի արքայա-
դատութեան ամենանոր սկզբունքների հա-
մեմատ:

IV. Դաւանութեան կատարեալ ազատու-
թիւն կը լինի: Հոգևորականութեան և բա-
րեգործական հիմնարկութիւնների պահպա-
նելը իւրաքանչիւր ծուխի վրա պէտք է
ընկնի:

V. Գաւառի տեղական զօրութիւնները
կազմում են. 1) ժանդարմեան զուգը և 2) մի-
լիցիայ: Միլիցիայի թիւը կը մանեն, բաց առ-
նելով քուրդերին, չէրկէներին և ուրիշ
թափառական ցեղերին: 1) Հայերը, 2) ոչ-
հայկական տարրը, որ բնակվել է գաւառում
5 տարի ժանդարմեան պահպան զօրքը հո-
գում է կարգը և ապահովութիւն պահպա-
նել գաւառի ամբողջ տարածութեան վրա:
Նրանց հրամայում է ժանդարմի զինաւորը,
որին նշանակում է գեներալ-զօրքերնաօրը,
տեղական զօրքերի գլխաւոր առաջնորդի ա-

ռաջարկութեամբ և որին անմիջապէս ստո-
րադրվում է: Միլիցիան գտնվում է տեղա-
կան զօրքերի զինաւորի սուսնորդութեան
տակ և նա պարտաւոր է, հարկաւոր եղած
ժամանակ, օգնութիւն հասցնել ժանդար-
մեան զուգին: Սովորական ժամանակնե-
րում զօրքող միլիցիան 4,000 զինաւոր-
ված մարդիկանցից կը բաղկանայ, բայց այն
կանոնաւոր պահպան զօրքերից, որոնց կայ-
սերական կառավարութիւնը, շատ կարե-
ւի է, կը ցանկանայ իր հաշով պահել նա-
հանգի բերքերում և ամրացած կէտերում:

VI. Ընդհանուր ժողովը կը ձևակերպվի
հետեւեալ կերպով. իւրաքանչիւր կազա կու-
ղարի երկու պատգամաւորներ—թիւը և
հայ, որոնց ընտրում են թիւը քաց և հայոց
ազգաբնակչութիւնները կազմում: Այս պատ-
գամաւորները, հաւաքվելով սանճախի գլխաւոր
քաղաքում միասին, իւրաքանչիւր Սանճախի
վրա երկու խորհրդականներ կընտրվին—քը-
րիստոնեայ և մահմետական: Ընտրողներ և
ընտրվողներ, երկու կարգի ընտրութիւնների
համար, կը լինեն. 1) նահանգի բոլոր բնակիչ-
ները որոնք 25 տարեկանից աւել են և որոնք
կամ անշարժ կալուածք ունեն, կամ վճարում
են մի որ և իցէ անմիջական հարկ. 2) հոգե-
ւորականութիւնը և գանազան գաւառութիւն-
ներին պատկանող եկեղեցականներ, 3) ուսում-
նարանների պրօֆէսորներ և ուսուցիչներ: Ծա-
նաչված կրօնական ընկերութիւնների գլխա-
ւորները իրաւունքով այս խորհրդի անդամ
ներ կը լինեն, իւրաքանչիւր դաւանութեան
կողմից մէկը: Ընդհանուր ժողովը հրաւիրվում
է տարին մի անգամ գաւառի գլխաւոր քա-
ղաքում նիստ կազմելու համար: Գեներալ-
զօրքերնաօրը պարտաւոր է իւրաքանչիւր
տարի Ֆինանսական հաշիւ մոցնել նրա
մէջ: Հարկերը ժողովելու և կարգաւորելու
կարգը կարող է փոխադրութեան ենթարկվել
երկրի միջոցների զարգացումն թիւն աջնելու
համար: Գեներալ-զօրքերնաօրը և ընդհա-
նուր ժողովը ի միասին կը սահմանեն, իւրա-
քանչիւր հինգ տարին մի անգամ, գումար-
ներ, որոնք պէտք է յանձնել Բ. Դրան, վե-
րջիշաւ օրէնսդրութիւններին համաձայն:

VII. Նրաշխար պետութիւնները կը
հիմնեն յանձնաժողով մէկ տարի ժամանակով
այս կանոնադրութեան կատարելուն վերա-
հասու լինելու համար, որը օրինական զօրու-
թիւն կը ստանայ արձանագրութեան (պրօտո-
կոլը) ստորագրելուց երեք ամիս յետոյ:

ԳԵՆԵՐԱԼԻՏԱ

Բայցից գրում են գերմանական լրագրին-
քում որ յունիսի 15-ին բազմաթիւ մշակ-
ներ խումբ խումբ անցել զնացել են Բայ-
սից դէպի Կոնստանդուպոլիս: Այդ մշակները
առավելա-սօցիալականներ են որոնք աշխա-
տում էին գործարաններում: Բայց գործա-
րանատէրերը որոշել են այժմ չընդունել
իրանց գործարանների մէջ առավարական
—սօցիալական մշակներին և արձակել են
նրանց: Միւսներին առավարական սօցիալա-
կան ընկերութիւնը ցրվել է պօլիցիայի տես-
չութեան հրամանով:

Պոզնից գրում են որ կառավարութիւնը
զօրքերի միջոցաւ թեմաք զուգել է Ռուսա-
տանի սահմանակից Կալուշ քաղաքում եղած
յարձակումը հրէաների և բողոքականների
վրա: Կառավարութիւնը հրամայել է կողմի
բոլոր խանութները և արգելել է որ երեք
մարդուց աւել չը հաւաքվին միասին: Մե-
ղաբնակներից կալանաւորել են աւելի քան
թէ 200 մարդ, որոնց մէջ գտնվում են կա-
թօլիկ քահանաներ:

Բերլինի «Volks Zeitung» լրագիրը գրում
է թէ Նօբելիցի դաւանաւորութեան ամօթի-
ւորից կալանաւորել են շատերին և դատա-
պարտել են: Մի և նոյն լրագիրը յայտնում է

որ Բերլինի «Freie Presse» լրագիր խմբագրա-
պետը արձակվել է բանտից, 3,000 մարկի
համար երաշխաւորութիւն տալով:

«Volks Zeitung»-ի լրագիրն այսօրվ, եթէ
Նօբելից չը մեռնի, գտնէ ուղեղի հիւանդու-
թիւն կունենայ և կը գժվի: Արգէն նշանները
սկսել են երեւել և շատ անգամ ծիծաղում է
գժի նման:

ԿՈՆԳՐԵՍ

«Independance Belge» լրագիրը գրում
է յունիսի 28-ին հետեւեալը: Միւսի որ կօնգ-
րէսը նոյնպիսի ժամանակ կը զբաղվի հայոց
խնդրով որպիսի զբաղվեցաւ բոլգարական
խնդրով: Հայոց խնդիրը գուցէ վիճարկու-
թիւնների առիթ կը լինի Անգլիայի և Ռու-
սաստանի մէջ, եթէ ճիշդ է այն ծրագիրը
որ Լոնդոնի կարդինալ մադալիւր է եղել առա-
ջարկել կօնգրէսում այդ խնդրի վերաբերու-
թեամբ: «Morning Post» լրագիրը որ բրի-
տանական կառավարութեան կիսապաշտօն-
ական օրգանն է, անգլիական ծրագրի բովան-
դակութիւնը հրատարակում է: «Հարց է
բարձրացել, ասում է «Morning Post», որ
ստիական թիւը բնական բաժանվի 15 նահանգ-
ների, որոնց կառավարիչներ ընտրվին այսպիսի
(որոշված թիւով) տարիքի համար և ամեն
նահանգի գլխաւոր քաղաքում գտնվի մի
անգլիական հիւպատոս: Այս կերպով, ասում
է «Morning Post», շատ ապահովագէս կը
հաստատվին լուր կառավարութիւն և առեւ-
տրական արդիւնաւոր յարաբերութիւններ
ստիական թիւը բնական Բացի այս, հաւա-
նական է որ այդ ժամանակ անգլիացի կա-
պիտալիստները աւելի փառահիմնաբար յան-
ձնառու կը լինեն երկաթուղիներ շինել և
այլ կարեւոր ձեռնարկութիւններ անել փոքր
Ասիայի, Ասորեստանի և Պարստիկ բարդա-
ւածման և առաջարկութեան համար: Բայց
կօնգրէսը արդեօք կընդունէ Անգլիայի պաշ-
տպանութեան (պրօտէկտորատ) այդ ծրա-
գիրը որի մասին առեւ-անգլիական համա-
ձայնութեան յիշատակարար մէջ էլ խօսված
է շատ անորոշ կերպով և այս բառերով
«Հայաստանում լինելու վերանորոգութիւն-
ների խառնուրդներ վերաբերվում են ոչ միայն
թիւը բնական այլ և Անգլիային»: Ուրեմն,
Անգլիան պարտաւորվում է այդ յօդուածի
համեմատ, մի տեսակ մասնաւոր պաշտպա-
նութիւն և հսկողութիւն ունենալ Հայաս-
տանի վրա: Հաւանական է որ կօնգրէսը չի
թողնի միայն Անգլիայի վրա այդ պաշա-
պանութեան պարտաւորութիւնը:

Բերլինից յունիսի 26-ին գրում են «Re-
publique Francaise» լրագրին հետեւեալը:
«Կօնգրէսը վերջացրեց Բոլգարիայի կաղմա-
կերպութեան քննութիւնը իր եօթներորդ
նստում որ այսօր հաւաքվեցաւ: Բիւսնակ
շնորհաւորից կօնգրէսին և մասնաւորապէս
գործի մէջ գլխաւոր շահ ունեցող տէրու-
թիւններին որ աջորդութեամբ վերջացան բա-
նակցութիւնները կօնգրէսին ներկայացված
այս գլխաւոր խնդրի վրա: Այնուհետև շնոր-
հակարարութիւն յայտնեց պ. Վադիկոմոսին
որ շատ լաւ կատարեց իր միջնորդի դերը:
Փրանսիական մինիստրը յանձնառու եղած էր
միջնորդել անգլիական, ասորիական և առե-
ւայց հաստատութեանների մէջ և իրան աջող-
վեցաւ գտնել մի այնպիսի ձևակերպութիւն
որի վրա ամենն էլ համաձայնեցան և
այդ ձևակերպութեան համեմատ ընդունեցին
եղած առաջարկութիւնները: Իշխան Բիւս-
նակը շատ աշխատում է որ գործերը շուտ
վերջանան և կարող եմ ապահովեցնել ձեզ
որ, եթէ մի նոր արգելք չը պատահի, կօն-
գրէսը չի ունենայ աւելի քան թէ 13 նիստ
և կը վերջանայ առաջ քան թէ յունիսի
կէսը (կառավարական ամսաթիւ):»

Բերլինից յունիսի 25-ին գրում են «Ti-
mes» լրագրին հետեւեալը: «Պ. Համոնը և
կոմս Կէրպարի, Բ. Դրան անգլիացի և Ֆը-
րանսիացի պարտապահանջների կողմից մի
գրութիւն ներկայացրել են կօնգրէսին: Մի-
գրութիւնն որ թիւը բնական պարտքի մի մասը
վճարեն Ռուսաստանը և նոր անկախ իշխա-
նութիւնները, համեմատութեամբ այն եկա-
մուտներին որ կունենան իրանց ստացած նոր
երկրներէ: Առաջարկում են որ բոլգարա-
կան նոր իշխանութեան վճարելու տարեկան
հարկը և այդ նահանգում եկեղեցապատկան
կալուածների վաճառվելուց զբաղաւոր ար-
դիւնքը գործածվի թիւը բնական պարտքերը
վճարելու համար: Մարկիզ Մարիսկերին
և պ. Վադիկոմոսն խոստացել են պաշտպա-
նել նրանց դատը: Որոշված է որ Բոլգարիա-
յում և Բուլգարիայում որ և իցէ ազգի և
դաւանութեան պատկանող բնակիչները կը-

նական և քաղաքական կատարեալ ազատու-
թիւն ունենան:

Բերլինից գրում են «Morning Post» լրա-
գրին հետեւեալը: «Կօնգրէսը ամեն խնդրի-
ների հիմնական սկզբունքները որոշելուց յե-
տոյ, հաւանականաբար կը յետաձգվի մինչև
աշուն: Իր այժմեան նիստը կը տեւէ մինչև
յուլիս ամսի կէսը և երբ երկրորդ անգամ
կը հաւաքվի աշունքին, կը վաւերացնէ մաս-
նաժողովների արած որոշումները որոնք,
մինչև կօնգրէսի երկրորդ անգամ հաւաքվելը,
կը կարգադրին ամեն մէկ խնդրի մանրամաս-
նութիւնները:»

«Daily News» ասում է որ լորդ Բիլօն-
սֆիլդին հակառակ էին Սօֆիայի խնդրում
Պրանսիան, Ֆրանսիան, Իտալիան և մինչև
անգամ Անգլիայի միւս հաւատարմատարները:
Լորդ Բիլօնսֆիլդը գրգռված, յուսահատա-
կան ջանքեր արաւ Սօֆիան թիւը բնական
թողնելու համար:

«Times» լրագիրը գրում է թէ այս րօ-
պէիս 80 օտար լրագիրների թղթակիցներ
կան Բերլինում, կօնգրէսից լուրեր հաղոր-
դելու համար:

ՄԵՇԱԿԻ ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ՓԱՐԻՑ, 27 յունիսի (9 յուլիսի): Ֆրան-
սիական «Temps» և «Journal des Debats»
լրագիրները զուգում են իրանց որ և է կար-
ծիք յայտնելու անգլո-թիւը քաց համաձայ-
նութեան մասին:

ԲԵՐԼԻՆ, 28 յունիսի (10 յուլիսի): Հնո-
ղէն կայսրի դէմ արած եղեռնագործութեան
դատարանի այսօրվայ նիստում քննութեան
ժամանակ, մեղադրվածը իրան մեղաւոր չը
համարեց, ապացուցանելով որ կամենում էր
անձնասպանութիւն գործել: Բայց մօտ երե-
սուն վկաներ հաստատեցին որ Հնողէն կայ-
սրի դէմ արձակեց ընկճողներ: Հնողէն դա-
տապարտված է մահովն պատժին:

ԲԵՐԼԻՆ, 28 յունիսի (10 յուլիսի): Դիպ-
լոմատական շըմաններում չեն հաւատում այն
լուրին, որ իբր թէ ասորիական և թիւը քաց
զօրքերը միաժամանակ կը գրաւեն Բօս-
նիա նահանգը:

ԲԵՐԼԻՆ, 28 յունիսի (10 յուլիսի): Կօն-
գրէսի այսօրվայ նիստում բողոքովին խօսք չը
կար անգլո-թիւը քաց համաձայնութեան մաս-
ին: Յանձնաժողովը վճիռները Բաթումի
մօտ որոշելու սահմանների մասին հաստատ-
ված են: Կօնգրէսի նիւթական աշխատանքը
աւարտված է համարվում: Կօնգրէսին ներ-
կայացրած է դաշնագրի խմբագրութիւնը:
Դաշնագրի մեծ մասը կարգաւորեցաւ և վա-
ւերացվեցաւ: Վաղը ընթերցանութիւնը կը
շարունակվի: Լորդ Բիլօնսֆիլդը հիւանդու-
թեան պատճառով ներկայ չը գտնվում նիս-
տին:

Կ. ՊՈԼԻՍ, 28 յունիսի (10 յուլիսի): «ԴՈ-
ԼՈՍԵ» լրագրին հետադրում են. «Նօբելում
Բ. Դուրը դիմեց հայոց Պատրիարք Ներսէսին
պահանջելով, որ նա յետ կանչի Բերլինից իր
պատգամաւորներին: Այս պահանջը յայտնե-
լու համար պատրիարքարանը ներկայացաւ
պետական խորհրդի անդամ հայ Աբրօ Էֆէն-
դին, որ վաղուց թիւը քաց ծառայութեան
մէջ է: Պատրիարքը Աբրօ Էֆէնդինի կարճ
ձառը լսելուց յետոյ, հետեւեալ պատասխանը
տուեց: «Յայտնեցէ Բ. Դրանը, որ նա առաջ
քան թէ ինձ կարողանայ ստիպել յետ կան-
չել հայոց պատգամաւորներին Բերլինից, պէտք
է կարգադրել ինձ կախ անել պատրիարքարանի
շինութեան առաջ: Յիսուն և եօթ տարի
սրանից առաջ յունաց պատրիարք Դրեգորը
բանվեցաւ նոյն իսկ եկեղեցու սեղանի մօտ և
քահանայական զգեստով կախվեցաւ տաճարի
դռներում: Նա կը հետեւում նրա օրինակին,
կերթում սեղանը, կը զգեստաւորվում և աւելի
լաւ կը համարեմ անձնատուր լինել զահիճ-
ներին, քան թողնել իմ հօտը: Այս հպարտ
և վեհանման պատասխանը, շուտով հասաւ
ուստաց դեսպանատանը: Ռուսաց դեսպան
իշխան Լ. օրանով—Բոսովսկի, իմանալով պատ-
րիարք Ներսէսի այս բացասումն, բացական-
չեց՝ «Ոչ, նրանք չեն համարձակվել դիպչել
նրան անգամ:»

